ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014 ԹՎԱԿԱՆ

1. Իրականացվել է Ջերմուկի քաղաքային համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգման, ընթացիկ վերանորոգման և փոսալցման աշխատանքներ, -***7 814 450 ՀՀ դրամ***
2. Իրականացվել է աստիճանասանդուղքների, բուլերների, կամրջակների հիմնանորոգում, ընթացիկ նորոգում -***242 000 ՀՀ դրամ***
3. Ջերմուկի համայնքի ոչ գյուղատնտեսական և գյուղատնտեսական հողերի համար ձեռք են բերվել կոորդինատներ, կատարվել են գեոդեզիական – քարտեզագրական աշխատանքների իրականացման ծախսեր- ***700 000 ՀՀ*** դրամ
4. Գրեթե ավարտին են հասցվել քաղաքի երկու թաղամասերի բնակելի շենքերի բակային հատվածների լուսավորության արտաքին ցանցի կառուցման աշխատանքները ձեռք են բերվել լամպեր և լուսատուներ- ***192600*** ՀՀ դրամ:
5. Համայնքի զբոսայգու և կանաչապատման տարածությունների համար ձեռք են բերվել ծառեր, ծաղիկներ, տնկիներ՝ ***726 600*** ՀՀ դրամ, եղևնիներ՝ ***1 488 300*** ՀՀ դրամ, դրանք մշտապես մշակվում և խնամվում են:
6. Ձեռք են բերվել ատլասներ, գրքեր, բուկլետներ՝ Ջերմուկը որպես կուրորտային քաղաք գովազդելու համար -***761 000 ՀՀ դրամ***
7. Ձեռնարկված հետևողական աշխատանքների շնորհիվ գույքահարկի, հողի հարկի և աղբահանության վճարների գանձումները կատարվում են 100 %-ով:
8. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի N 17-Ա որոշմամբ քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր լիազորությունը իրականացվում է համապատասխան բնույթի գործունեություն ծավալող, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթում հաղթած «ԲԻԳ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջոցով: «ԲԻԳ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը ամեն օր կատարում է աղբահանության ու սանմաքրման աշխատանքներ: Ամռան ամիսներին ամեն օր լվացվում են կենտրոնական փողոցներն ու մայթերը: Տեղադրվել են նոր աղբարկղեր, նստարաններ՝ 1 930 000 ՀՀ դրամ ներդրումով: Նոր նստարանները՝ քաղաքի լոգոյով և կողքի հատվածում՝քաղաքի պաշտոնական ինտերնետային կայքի հասցեով, տեղադրվել են Ջերմուկի ամենամարդաշատ և զբոսաշրջիկների կողմից սիրված վայրում՝ ըմպելասրահում: Նստարաններից մի քանիսը դեռևս անցնում են փորձաշրջանը՝ պարզելու համար՝ արդյոք դրանք հարմար են Ջերմուկի եղանակային պայմաններին: Փորձաշրջանը հաջողությամբ ավարտվելու դեպքում ըմպելասրահի տարածքի բոլոր նստարանները կփոխարինվեն նորերով:
9. Ջերմուկի համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ Ջերմուկ քաղաքի բոլոր մարդաշատ վայրերում և հիմնական փողոցներում (նաև՝ Ձախափնյակում և Կեչուտ գյուղում) տեղադրվել են տեսախցիկներ՝

քաղաքացիների և զբոսաշրջիկների անվտանգության ապահովման և քաղաքի երթևեկությունը վերահսկելու նպատակով: Այս ջանքերի արդյունում Ջերմուկը մեր երկրում համարվել է եզակի քաղաք՝ քրեական հանցագործությունների զրոյական մակարդակի առումով. սա այն դեպքում, երբ սեզոնային ամիսներին քաղաքի գիշերային կյանքը ակտիվ է մինչև լուսաբաց:

10. Զբոսաշրջիկներին և տեղաբնակներին մատուցվող ծառայությունների ցանկում դեռևս 2013 թվականի վերջերից ավելացել էր ևս մեկը. Ռոստելեկոմ ընկերության և քաղաքապետարանի միջև պայմանավորվածության համաձայն, ողջ քաղաքում գործում է անլար Wi-Fi-ինտերնետ ծառայությունը ՝ անվճար: Ծառայությունը գործում է նաև Զախափնյակ թաղամասում, չնայած որ այն առողջարանային գոտի չի համարվում:
11. Սոցիալ-տնտեսական օժանդակություն է ցուցաբերել քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքներին ՝ ֆինանսավորելով դեղորայքային, բուժման, ուսման վարձի և այլ անհրաժեշտ կարիքները: Այս օժանդակությունը դրամական արտահայտությամբ կազմում է ***3 565 000*** դրամ:
12. Համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի արդիականացմանն ուղղված բարելավման աշխատանքները ընթացքի մեջ են: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրով Ջերմուկի ջրահեռացման աշխատանքները պատշաճ իրականացնելու համար 2014 թվականի ընթացքում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի պատվերով Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան: Նորակառույց մաքրման կայանը արդեն հանձնվել է շահագործման. բացման արարողությանը ներկա են եղել ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեան և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենը: Այցի շրջանակներում կայացել է աշխատանքային հանդիպում, որին մասնակցել են նաև Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության աշխատակիցներ, Վայք, Եղեգնաձոր և մի շարք այլ համայնքների ղեկավարներ: Հանդիպման ընթացքում Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի հետ միասին քննարկվել են մարզում առկա խնդիրները, ոլորտի բարելավմանը ուղղված քայլերը և իրականացվող ծրագերը: Հանդիպման վերջում ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագայում Ջերմուկում էներգախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման վերաբերյալ: Միաժամանակ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենը քաղաքապետին խոստացել է մոտ ապագայում Ջերմուկ քաղաքին նվիրել նոր աղբատար մեքենա:

13. Զբոսաշրջությանն ուղղված քայլերը ամեն հնարավոր հանգամանքներում են արվում: Այս առումով բավականին սերտ են քաղաքապետարանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության միջև կապերը: Տարեվերջին՝ 2014թ. դեկտեմբերի 20-ին Ջերմուկի քաղաքապետարանում տեղի է ունեցել խորհրդակցություն ՀՀ էկոնոմիկայի

նախարարության զբոսաշրջության վարչության պետ Մեխակ Ապրեսյանի, տուրօպերատորների, Ջերմուկ քաղաքում գործող առողջարանների ու հյուրանոցների տնօրենների, ոլորտի ներկայացուցիչների և քաղաքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ: Հանդիպման նպատակը 2015թ. նախատեսվող՝ զբոսաշրջության զարգացմանն ուղղված քայլերի և ծրագրերի քննարկումն էր: Պարոն Մ. Ապրեսյանը ներկայացնեց զբոսաշրջության ոլորտի, այն՝ Ջերմուկ քաղաքում զարգացնելու ճանապարհին առկա խնդիրներին, որոնք լուծելի դիտարկվեցին, բայց և՝ հետևողական, համբերատար և նպատակաուղղված աշխատանք պահանջող: Առողջարանների տնօրենների կողմից կատարվեցին բավականին արդյունավետ առաջարկներ, որոնք պ-ն Ապրեսյանը խոստացավ քննարկել նախարարության համապատասխան կառույցում:

14. Հայաստանի շախմատի ֆեդերացիան 2014 թվականի սպորտային միջոցառումների ցանկում 2014 թվականի մայիսի 28-ից հունիսի 6-ը Ջերմուկում անցկացրել է շախմատի ՀՀ տղամարդկանց առաջնության կիսաեզրափակիչ փուլը, հունիսի 26-ից հուլիսի 6-ը՝ մանկապատանեկան միջազգային մրցաշարը, իսկ հունիսի 15-ից հունիսի 25-ը՝ Կարեն Ասրյանի 7-րդ հուշամրցաշարը: 2014 թվականի հուլիսի սկզբին Ջերմուկում կայացել է նաև մեր համերկրացի, լուսահոգի Ստեփան Ավագյանի հիշատակին նվիրված շախմատի հուշամրցաշարը, որին մասնակցել են երեխաներ Հայաստանի տարբեր մարզերից, Վրաստանից,Ռուսաստանից, Թուրքմենիայից և Լեռնային Ղարաբաղից: Վերջին տարիների ընթացքում Ջերմուկը վերածվել է շախմատային տարբեր առաջնությունների կենտրոնի, և այդ գործում իր մեծ ներդրումն է ունեցել Ստեփան Ավագյանը: Շախմատային ֆեդերացիայի որոշմամբ, այս հուշամրցաշարը այսուհետ կանցկացվի ամեն տարի և կդառնա ավանդական: Պարգևատրման հանդիսավոր արարողության ժամանակ մրցաշարի մրցանակային ֆոնդից զատ հաղթող մասնակիցների համար մրցանակներ էր պատրաստել Ավագյանների ընտանիքը («Ջերմուկ Աշխարհ» առողջարանային համալիրի ուղեգրեր) և Ջերմուկի համայնքի ղեկավարը:

15. Մշտապես թարմացվում է քաղաքի jermukcity.am ինտենետային կայքէջը, որտեղ տեղեկություններ կան քաղաքի առողջարանների ու հյուրանոցների, տեսարժան վայրերի, ճանապարհների, տրանսպորտային կապի վերաբերյալ: Արդիական է քաղաքապետարանի պաշտոնական jermukmunicipality.am ինտերնետային կայքէջը, որը շահագործվում է «Տեղեկատվական Համակարգերի Զարգացման և Վերապատրաստման Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: Վերջինս ՀՀ-ի համայնքների մեծ մասում ներդրել է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ստեղծում և գործարկում» ծրագիրը, որը արդյունավետ կիրառվում է քաղաքապետարանի աշխատակազմի կողմից և համարվում է ամենօրյա աշխատանքի առանցքը: Ծրագիրը հասանելի է յուրաքանչյուրին, ով մուտք գործելով կայքէջ՝ կարող է ծանոթանալ համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումներին, համայնքի բյուջեի կատարողականին, համայնքում տեղի ունեցող իրադարձություններին, նորություններին: Համակարգում գրանցված են և համայնքի ղեկավարը, և ավագանու անդամները. նրանցից յուրաքանչյուրին առցանց հնարավոր է հարցեր ուղղել և պատասխաններ ստանալ:

16. Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Ջերմուկը համարվում է մեր երկրում դիվանագիտական առաքելություն իրականացնող արտակարգ և լիազոր դեսպանների հանդիպման վայր: 2014 թ. մարտի 2-ին՝ Դիվանագետի օրվա կապակցությամբ, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ներկայությամբ տեղի է ունեցել Ջերմուկի դեսպանների ակումբի հանդիպումը: Դեսպանների ակումբը հիմնադրվել է 2013 թվականին, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի նախաձեռնությամբ: Ակումբի նախագահը Ղազախստանի դեսպանն է: Դեսպանների ակումբի անդամները քննարկել են 2013 թ. Հայաստանի արտաքին քաղաքական բնագավառում տեղի ունեցած զարգացումները, միջազգային կազմակերպություններում ներգրավվածության խորացման և համագործակցության սերտացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի և միջազգային հանրության կողմից գործադրվող քայլերը, միջազգային և տարածաշրջանային օրակարգային խնդիրների վերաբերյալ Հայաստանի մոտեցումները: Հյուրերը Ջերմուկի քաղաքապետի ուղեկցությամբ եղել են նաև Ջերմուկի ճոպանուղում, մասնակցեցել են «Հրաժեշտ ձմռանը» միջոցառմանը, այնուհետև այցելել են Ջերմուկի պատկերասրահ և «Ջերմուկ Գրուպ» հանքային ջրերի գործարան: Այս հանդիպումները և ճանաչողական այցերը մեծապես նպաստում են Ջերմուկի հետագա զարգացմանն ուղված քայլերի ձեռնարկմանը, հետագայում նաև նոր ներդրումային ծրագրերի կազմմանն ու իրականացմանը:
17. Ջերմուկի զարգացման գործընթացում մեծագույն ձեռքբերում է Ասիական Զարգացման բանկի հետ ընթացքի մեջ գտնվող համագործակցությունը: Ասիական Զարգացման Բանկը ՀՀ կառավարությանը տրամադրել է քաղաքականության և խորհրդատվական տեխնիկական աջակցություն՝ պատրաստելու քաղաքի զարգացման և ներդրումային ծրագրեր չորս քաղաքներում՝ Գյումրիում, Դիլիջանում, Վանաձորում և Ջերմուկում: Քաղաքի զարգացման/ներդրումային ծրագրերը նպատակաուղղված են զարգացման և քաղաքականության գլխավոր մարտահրավերներին, որոնք կապված են քաղաքային տրանսպորտի, ջրամատակարարման և ջրահեռացման, կոշտ թափոնների կառավարման, թաղային ջեռուցման, բնակարանային, տնտեսական զարգացման, նյութատեխնիկական, զբոսաշրջության և լուսավորման հետ: Քաղաքի զարգացման և ներդրումային ծրագրերը կներառեն 10 տարվա ժամանակահատված և ընտրված քաղաքներում կիստակեցնեն ու կառանձնացնեն քաղաքային ներդրումային ծրագրերի և բարեփոխումների ցանկ: ԱԶԲ-ի և Ջերմուկի քաղաքապետի ու քաղաքապետարանի աշխատակազմի հետ կայացել են մի քանի հանդիպումներ, որոնց նպատակը Ջերմուկ քաղաքի վերաբերյալ նշված ծրագրերի նախնական գնահատումն ու քննարկումն էր: Կարևոր է փաստել, որ ԱԶԲ-ի բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից կազմվել և արդեն իսկ պատրաստ է «Ջերմուկի քաղաքաշինական զարգացման ծրագիր» հիմնարար և ծավալուն փաստաթուղթը, որը մեր քաղաքի ու համայնքի վերաբերյալ համապարփակ և խորը ուսումնասիրություն-վերլուծություն պարունակելուց բացի, ներառում է ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերը. դրանք

ապահովելու են համայնքային հիմնախնդիրների լուծումներ՝ սկսած 2016 թվականի սկզբից: Համայնքային հիմնախնդիրներից ԱԶԲ-ի մասնագետները առանձնացրել են

- *Շահումյան փողոցի վերջնամասի վերանորոգում և ասֆալտապատում*
- *Կեչուտ գյուղը Ձախափնյակին կապող ճանապարհի տեղակայում, ասֆալտապատում*
- *Դեպի եղնիկի արձան տանող ճանապարհի վերանորոգում*
- *Ջերմուկի կիրճի հեպիոտնային ճանապարհների՝ ճեմուղիների վերանորոգում կամ տեղակայում*
- *Ջերմուկի հեպիոտնային կամրջի կառուցում*
- *Եկեղեցի տանող ճանապարհի մայթերի տեղակայում, բարեկարգում*
- *Քաղաքի մուտքը նշանավորող կառույցի տեղակայում:*

18. Ակտիվ գործում է 2013 թ-ից հիմնադրված «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ-ը, որն իր շուրջն է համախմբել համայնքի երիտասարդությանը, կազմակերպվում են համաքաղաքային միջոցառումներ, քննարկում-սեմինարներ, էքսկուրսիաներ, ճանաչողական արշավներ, կամավորական նախաձեռնություններ, տարբեր թեմաներով դասընթացներ: 2014 թվականի փետրվարի 14-ին և 15-ին ՀՈԱԿ-ի և «Ջերմուկի զարգացման կենտրոն» ՀԿ-ի համատեղ ջանքերով կայացել է «Ձնեմարդուկ-2014» փառատոնը: Փառատոնի նպատակը ձմեռային տուրիզմի զարգացումն է . մոտ 800 մարդ է մասնակցել «Ձնեմարդուկ-2014»-ին, որի ընթացքում պատրաստվել են 50 սպիտակ-սառը քանդակներ, լավագույն գործերի հեղինակները պարգևատրվել 2-օրյա հանգստյան ուղեգրերով և իրենց հանգիստն են ացկացրել Ջերմուկի առողջարաններում: Ջերմուկցի հաղթողները մեկնել են Արցախ շրջագայության, որը ֆինանսավորվել է Ջերմուկի համայնքի ղեկավարի կողմից: Փառատոնի շրջանակներում անցկացվել են նաեւ այլ մրցույթներ, մրցել են դահուկորդները, վազորդները, վոլեյբոլիստները եւ սահնակորդները:
19. «Ձնեմարդուկ-2014» փառատոնից օրեր անց՝ 2014 թ. մարտի 1-ին Վայոց ձորի մարզպետարանի և Ջերմուկի քաղաքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպել է ևս մի հետաքրքիր փառատոն՝ «Ձմռան հրաժեշտ» անվանմամբ: Փառատոնը նպատակ ուներ Ջերմուկ քաղաքում զբոսաշրջության համար պասիվ համարվող ամիսներից մեկը՝ մարտը, նույնպես հետաքրքիր և հիշարժան ամիս դարձնելու թե՛ ջերմուկցիների և թե՛ հյուրերի ու զբոսաշրջիկների համար: Փառատոնի օրը Ջերմուկի քաղաքապետարանի նախաձեռնությամբ ճոպանուղին գործել է անվճար՝ հաճելի և անմոռաց դարձնելով միջոցառման մասնակիցների օրը:
20. 2014 թ. օգոստոսի 1-ից «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ-ում մեկնարկվել է ամառային դպրոց-ճամբարը, որին մասնակցել են համայնքի 7-15 տարեկան երեխաները. նրանց ընտրությամբ դպրոց-ճամբարն անվանվել է «Ժպիտ»: Կենտրոնի երիտասարդ կամավորները կազմակերպել են շախմատի, երգի, պարի, նկարչության և մոդելավորման խմբակներ, որոնք նպատակ են ունեցել բազմաբովանդակ և հետաքրքիր դարձնելու երեխաների ամառային առօրյան: Արդի կառուցողական մեթոդներով անցկացվել են

հանրամատչելի դասընթացներ և քննարկումներ հայրենասիրության, առաջին բուժօգնության, բնապահպանության թեմաների շուրջ: Բացի ուսուցողական և ճանաչողական դասընթացներից, կազմակերպվել են կինոդիտումներ, էքսկուրսիաներ, տարբեր հանդիպումներ և ժամանցային խաղեր: Ճամբարային օրերի ընթացքում մասնակից երեխաներին հյուրընկալել է Ջերմուկի համայնքի ղեկավարը : Վերջում կազմակերպվել է հրաժեշտի միջոցառում, որի ընթացքում երեխաները ցուցադրել են երիտասարդներից իրենց փոխանցված գիտելիքներն ու հմտությունները՝ «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» -ի կողմից նվեր ստանալով գեղեցիկ և նորաոճ սպորտային շապիկներ: Միջոցառմանը ներկա են եղել համայնքի բնակիչներ, քաղաք այցելած հյուրեր և մասնակից երեխաների ծնողներ: Վերջիններիս առաջարկով «Ժպիտ» ամառային դպրոց-ճամբարը իր գործունեությունը կծավալի նաև հաջորդող տարիներին՝ ամառային արձակուրդի օրերին՝երեխաների արձակուրդային օրերը դարձնելով արդյունավետ և ուսումնալի:

21. Հաշվետու տարվա հուլիսի 22-ին ճանաչողական այցով Ջերմուկի քաղաքապետը հյուրընկալել է «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն ՀԿ-ի անդամներին, որոնք այցելության համար իրենց տնօրեն Սուսաննա Մարտիրոսյանի խորհրդով ընտրել էին հենց Ջերմուկը: ՀԿ-ի տնօրենը նշեց, որ այս տարիների ընթացքում Ջերմուկը աննկարագրելիորեն փոխվել է՝ վերածվելով բարձրակարգ, գեղեցիկ և մաքուր զբոսաշրջային քաղաքի: Հյուրերը իրենց հիացմունքն արտահայտեցին քաղաքի մաքրության վերաբերյալ (մասնավորապես ամեն առավոտ ջրցան մեքենայով քաղաքի գլխավոր փողոցները ջրելու և մաքրելու վերաբերյալ): Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը երեխաներին ներկայացրել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նրբությունները և զբոսաշրջային քաղաքի կառավարման առանձնահատկությունները՝ Ջերմուկի օրինակով, որին հաջորդել են պրակտիկ այցելությունները՝ առողջարաններ, «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի հանքային ջրերի գործարան և Ջերմուկի տեսարժան վայրեր:

22. Հաճախակի են աշխատանքային հանդիպում-քննարկումները ինչպես համայնքային, այնպես էլ պետական հիմնարկների տնօրենների, աշխատակիցների հետ. քննարկվում են քաղաքին վերաբերող բազմաթիվ խնդիրներ, դրանց լուծման համագործակցային ուղիներ: Ոստիկանության օրվա և փրկարարի օրվա կապակցությամբ քաղաքապետարան են հրավիրվել և քաղաքապետի պատվոգրերով պարգևատրվել են մի խումբ ոստիկաններ և փրկարարներ, մասնավորապես՝ սեպտեմբերի 4-ին՝ ՀՀ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ Ջերմուկի քաղաքապետի աշխատասենյակում կազմակերպվել է հանդիպում Ջերմուկի հրշեջ-փրկարարական ջոկատի աշխատակիցների հետ: Օրվա առթիվ պատվոգրերով և հուշանվերներով պարգևատրվել են Ջերմուկի ջոկատի մի քանի աշխատակիցներ: Սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել հերթական աշխատանքային հանդիպում-քննարկումը Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի և ՀՀ Ոստիկանության Ջերմուկի բաժնի աշխատակիցների միջև: Քննարկվել են ոստիկանության հետ հետագա համագործակցության շրջանակները ընդլայնելու վերաբերյալ բազմաթիվ խնդիրներ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ ոստիկանության Վայոց ձորի վարչության Ջերմուկի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ՝ Ա. Խաչատրյանը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի ՄՎ բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ՝ Ա. Գևորգյանը, նաև նշված համակարգի և համայնքի ավագանու ներկայացուցիչներ:

23. Հաշվետու տարվա ընթացքում՝ նոյեմբերի 7-8-ը Ջերմուկում, արդեն ավանդաբար, կայացել է գյուղական համայնքների 4-րդ համաժողովը: Այս կապակցությամբ Ջերմուկը հյուրընկալել է ՀՀ գյուղական համայնքների ղեկավարներին, բարձրաստիճան շատ պաշտոնյաների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների՝ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ: Համաժողովի նպատակը տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների արդիական խնդիրների քննարկումն է՝ ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Համաժողովի շրջանակում կազմակերպվել են կլոր սեղաններ, որոնց ընթացքում քննարկվել են տեղական ինքնակառավարման մարմինների զարգացմանը, շրջակա միջավայրի ու բնապահպանական հիմնախնդիրները, գյուղատնտեսության զարգացման միտումները, ինչպես նաև զբոսաշրջությանը և տարածքային համաչափ զարգացմանը վերաբերող հարցեր:

24. 2014 թ.դեկտեմբերի 2-ին Ջերմուկի քաղաքապետարանի և « Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի հետ ստորագրված համաձայնագրով մեկնարկել է «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը»՝ ՀաՄաՏեղ ծրագիրը: Համաձայնագիրը ստորագրել են Ջերմուկի համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյանը և ՀՖՄ փոխնախագահ, ՀաՄա Տեղ ծրագրի ղեկավար Դավիթ Թումանյանը: ՀաՄաՏեղ ծրագիրը հնգամյա գործընթաց է, որի նպատակն է բարձրացնել հանրային մասնակցության աստիճանը ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներում: Ծրագիրը քաղաքացիներին տրամադրելու է վստահելի տեղեկատվություն և հզորացնելու է քաղաքացիական հասարակությանը՝ արդյունավետ, հաշվետու և մասնակցային տեղական ինքնակառավարումը խթանելու նպատակով: Ծրագիրն իրականացվում է «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի կողմից՝ Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶՎԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի, Եվրասիա համագործակցության հիմնադրամի (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) հետ համատեղ և ֆինանսավորվում է Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կողմից:

25. 2014թ. հունիսից Ջերմուկում մեկնարկել է նաև «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն»-ի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է Ջերմուկ քաղաքի համար մշակել շրջակա միջավայրի պահպանության տեղական պլանը՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի կառավարման բարելավմանը եւ բնապահպանական պլանավորման գործնական

կիրառմանը: Ծրագրի հիմնական արդյունքը պետք է լինի շրջակա միջավայրի բարելավված կառավարումը: Ծրագրի շրջանակներում մշակված «Ջերմուկ քաղաքի շրջակա միջավայրի իրավիճակի վերլուծություն. գործողությունների ծրագիր» հիմնարար փաստաթուղթը պատրաստ լինելուն պես կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանն ու հաստատմանը:

26. Հարուստ և հագեցած միջոցառումներ են եղել նաև կրթամշակութային և սոցիալական ոլորտներում: Համայնքում մեծ շուքով նշվել է հատկապես երեխաների միջազգային օրը՝ հունիսի 1-ը: Այն համաքաղաքային միջոցառում էր՝ լի անակնկալներով՝ անվճար պաղպաղակ, քաղցր բամբակ ու popcorn է բաժանվել ներկա բոլոր երեխաներին:
27. Հաշվետու տարվա հունիսի 9-ից մեր համայնքում մեկնարկել է աննախադեպ մարդասիրական ակցիա. համայնքի բարեկամ, մոսկվայաբնակ Սերգեյ Մովսիսյանի և քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանի համատեղ պայմանավորվածությամբ համայնքի յուրաքանչյուր ընտանիքում ծնվող 3-րդ և հաջորդ երեխայի համար, բացի ՀՀ կառավարության կողմից հատկացվող միանվագ նպաստից, տրամադրվում է 1000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ: 2014 թվականի ընթացքում նշյալ ակցիայի շրջանակներում բարեգործության են արժանացել 3 ընտանիքներ:
28. Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ, Ջերմուկ քաղաքում կազմակերպվել է դրամահավաք, որի ողջ հասույթը տրամադրվելու է եկեղեցու բակում զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի տեղադրմանը: Հանգանակությանը մասնակցելու համար բացվել են համապատասխան հաշվեհամարներ: Խաչքարը տեղադրվելու է Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցու բակում: Բացման արարողությունը կկայանա 2015 ապրիլի 24-ին:
29. Չեն անտեսվել համայնքի բնակչության դիմում-առաջարկները: Դրանցից մեծ մասին ընթացք է տրվել:

ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում հրավիրվել են ավագանու նիստեր՝ հաշվետու տարվա ընթացքում՝ թվով 6: Ավագանին քննարկել ու հաստատել է համայնքի տարեկան բյուջեն, անհրաժեշտության դեպքում կատարել բյուջեի ներքին փոփոխություններ ու լրացումներ, հաստատել է քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների պահպանման ծախսերը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի, այդ թվում՝ հողի, օգտագործման տրամադրման կամ օտարման պայմանները և գները: Ավագանին իր լիազորությունների սահմաններում քննարկել է նաև համայնքում առկա տարբեր խնդիրներ, դրանց տվել համապատասխան լուծումներ: Նիստերում քննարկված հարցերի կապակցությամբ ընդունվել են, տարեկան կտրվածքով, 56 որոշումներ, որոնցից 14-ը՝ նորմատիվ: Նորմատիվ

որոշումների մեջ առանձնանում են «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին», «Ջերմուկի քաղաքային համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին», «Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Ջերմուկի համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» որոշումները: Վերջիններս ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն, որտեղ հաջողությամբ անցել են իրավական ակտերի փորձաքննությունը: Վերը նշված բոլոր որոշումները կից հավելվածներով տեղադրվել են համայնքի մարդաշատ վայրերում փակցված տեղեկատվական ցուցատախտակների վրա:

Համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների շրջանակում ընդունվել են 116 որոշումներ և անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել դրանց կատարման ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՆՐԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության համար սահմանված է շաբաթական մեկ օր՝ ուրբաթ օրը ժամը 10.00-ից 13.00-ը: Անհրաժեշտության դեպքում քաղաքացու ընդունելությունը կատարվել է նաև շաբաթվա մյուս օրերին: Քաղաքացիներից ընդունվում են նաև գրավոր դիմումներ, որոնց քննարկումը կատարվում է օրենքով սահմանված ժամկետներում: 2014 թվականի ընթացքում ընդունելության են եղել 58 քաղաքացիներ, ստացվել են 98 գրավոր դիմումներ: Քաղաքացիները հիմնականում դիմում են աշխատանքի տեղավորման, ինքնակամ կառույցների օրինականացման, սեփական անշարժ գույքի հասցեավորման, դրամական օգնություն ստանալու խնդրանքներով:

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ